



ՄԱՐԻ ՖԱԿՈՐ ՍՈՒՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏՔ ԵՐԹՆԵՐՈՐԴ ԿՐԻԱԿԻ

04 ՆՈՅԵՄԲԵՐ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Աղոթք	Էջ 3
Ծանուցումներ	Էջ 3

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (22.15-25)

Այսպէս կ'ըսէ Տէրը, Երկնային Զօրքերու Տէրը.

« Գնա՛՜ արքունի հազարապետ Սոմնասի դիւանը մտիր եւ ըսէ իրեն. – Ինչո՞ւ հոս եկած ես, ի՞նչ գործ ունիս հոս, որ այստեղ քեզի գերեզման փորել կու տաս, այս բարձունքին վրայ քեզի ժայռափոր դամբարան կը շինես: Լսէ՛, ո՛վ մարդ, Երկնաւոր Զօրքերու Տէրը քեզ հողկէ պիտի հանէ եւ քաշկուտելով դուրս նետէ. քեզ մեծ եւ անսահման երկիր մը պիտի նետէ եւ հոն պիտի մեռնիս: Քու գեղեցիկ կառքդ անարգանքի առարկայ պիտի ըլլայ եւ իշխանական տունդ՝ ոտքի կոխան: Աստուած քեզ քու պաշտօնէդ եւ քու դիրքէդ պիտի հեռացնէ: Այն օրը պիտի կանչեմ իմ ծառաս, Քեղկիայի որդի Եղիակիմը, եւ քու պատմութեանդ անոր պիտի հազցնեմ, անոր պիտի տամ քու իշխանական պսակդ, եւ անոր պիտի յանձնեմ արքունի հազարապետութիւնը, որպէսզի հօր մը պէս կառավարէ

Երուսաղէմի եւ Յուդայի բնակիչները: Դաւիթի տան վերակացութիւնը անոր պիտի տամ. պիտի իշխէ, եւ ո՛չ ոք պիտի ընդդիմանայ անոր: Իր վճիռները բացարձակ պիտի ըլլան. ո՛չ ոք պիտի կարենայ փակել ինչ որ ինք կը բանայ, եւ ո՛չ ոք պիտի կարենայ բանալ ինչ որ ինք կը փակէ: Զայն իշխան պիտի կարգեմ եւ ամբօրէն հաստատեմ պատին ամրացուած գամի մը պէս, եւ անիկա իր հօրը տան փառքը պիտի ըլլայ: Իր հօրը տան մէջ դիրք ունեցող բոլոր մարդիկը, փոքրէն մինչեւ մեծ իրենց յոյսը անոր վրայ պիտի դնեն եւ իրմէ կախուած պիտի ըլլան. եւ ինչպէս երբ տան մը բոլոր անօթները, փոքր ամաններէն մինչեւ մեծ կաթսաները մէկ գամէ կախուին՝ գամը կը խախտի ու կ'իյնայ, այնպէս ալ, – կ'ըսէ Երկնաւոր Զօրքերու Տէրը, – գամի մը պէս հաստատուած Եղիակիմն ալ պիտի շարժի, պիտի իյնայ ու կործանի, եւ անոր փառքը պիտի կորսուի»: Տիրոջ վճիռն է ասիկա:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԵՓԵՍԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ

(1.1-14)

Ես, Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, կը գրեմ Եփեսոս բնակող եղբայրներուդ,

Յիսուս Քրիստոսի հաւատացողներուդ:
Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս
Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն
պարգեւեն ձեզի:

Օրհնեալ է Աստուած, մեր Տիրոջ
Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոս-
սով մեզ օրհնեց երկինքի մէջ ամէն
տեսակի հոգեւոր օրհնութեամբ: Անիկա
աշխարհի գոյութենէն իսկ առաջ մեզ
ընտրած էր՝ Քրիստոսի միջոցաւ իրեն
պատկանելու համար որպէս սուրբ եւ
անարատ ժողովուրդ, եւ իր սիրով մեզ
նախասահմանեց Յիսուս Քրիստոսի
ձեռքով իր որդիները ըլլալու, որովհետեւ
ա՛յդ էր իր կամքը եւ ծրագիրը:

Ուստի գովենք զինք այն փառքին
համար որ մեզի շնորհեց իր սիրելի
Որդիին միջոցաւ: Արդարեւ, անո՛վ
փրկուեցանք եւ անոր արիւնով մեր
մեղքերուն թողութիւն գտանք: Ո՛րքան
մեծ է իր շնորհքը որ առատօրէն տուաւ
մեզի՝ ամենայն իմաստութեամբ եւ
գիտութեամբ: Որովհետեւ իր կամքին
համաձայն մեզի յայտնեց շատ
կանուխէն պատրաստած իր ծրագիրը, որ
Քրիստոսով պիտի իրագործուի: Եւ այդ
ծրագիրը սա է, որ երբ ժամանակները
իրենց լրումին հասնին, Քրիստոս իրմով
պիտի բովանդակէ ամէն ինչ որ կայ
երկինքի մէջ եւ երկրի վրայ:

Աստուած, որ Քրիստոսով ամէն ինչ
կը յաջողեցնէ ըստ իր առաջադրած
ծրագրին եւ կամքին, առաջուց հրաւիրեց
մեզ՝ իր ժողովուրդը ըլլալու եւ իր
փառքը գովերգելու. մենք, որ Քրիստոսի
յուսացողներուն առաջիններէն եղանք:
Դուք ալ, երբ լսեցիք ճշմարիտ քարո-

զութիւնը, այսինքն
Աւետարանը որ
ձեզի փրկութիւն
բերաւ, հաւատացիք
Քրիստոսի եւ
խոստացուած Սուրբ
Հոգիով կնքուեցաք:
Եւ Սուրբ Հոգին
զրաւական է՝ թէ պիտի
ժառանգենք Աստուծոյ խոստումը, եւ
որպէս իր կողմէ փրկուած ժողովուրդ՝
իր փառքը գովերգենք:

...երբ լսեցիք
... Աւետարանը
որ ձեզի
փրկութիւն
բերաւ,
հաւատացիք
Քրիստոսի եւ
խոստացուած
Սուրբ Հոգիով
կնքուեցաք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍԻ

(8.17-21)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ.
«Զկայ ծածուկ բան մը որ
չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը՝
որ չգիտցուի եւ երեւան
չգայ: Ուրեմն ուշադիր
եղէք թէ ի՛նչ պէս
կ'ընդունիք այս
խօսքերը, որովհետեւ
ունեցողին պիտի
տրուի, իսկ չունեցողէն
պիտի առնուի նոյնիսկ
այն՝ ինչ որ կը կարծէ
թէ ունի»:

...ունեցողին
պիտի
տրուի, իսկ
չունեցողէն
պիտի առնուի
նոյնիսկ այն՝
ինչ որ կը
կարծէ թէ
ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները
իրեն եկան, բայց խուռն բազմութեան
պատճառով չկրցան իրեն մօտենալ:
Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ եւ
եղբայրներդ դուրսն են եւ կ'ողբեն քեզ
տեսնել»:

Յիսուս ըսաւ. «Մայրս ու
եղբայրներս անոնք են որոնք Աստուծոյ
խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

ԱՂՕԹՔ

Քրիստոս,
դուն որ Հօր Աստուծոյ
զօրութիւնն ես եւ իմաստութիւնը,
քեզի դարձուր անկման հակեալս:
Դէպի քեզ քալելով՝
կը բուժուի խոցեալս,
կը լուսաւորուի ստուերներու
եւ մթութեան մէջ մնացեալս,
կը մխիթարուի անձկահարեալս,

կը խաղաղի տագնապեալս,
կ'ազատի հակասութիւններու
անձնամատնեալս,
կը պարզանայ շփոթութենէ
եւ խուճապէ ամբոխեալս,
կը շնչաւորուի հեղձեալս
քառաթեւ խոնարհութեանդ
հրաշալի եւ հզօր նշանով,
խաչեալ փրկիչ: Ամէն:



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋ. ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՇԻՄԱՂԴՈՒԹԵԱՆ

60- ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ
ՅՈԲԵԼԵՆԱԿԱՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ

Օրհնութեամբ եւ Նախագահութեամբ՝
Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Հովանաւորութեամբ՝
«Բաստրմաճեան» Հիմնադրամի

Կազմակերպութեամբ՝
Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Հոգաբարձութեան

Շաբաթ, 15 Դեկտեմբեր 2018

Երեկոյեան ժամը 7:30-ին
Հայ Կեդրոնէն ներս

Մեղաններ ապահովելու համար հեռաձայնել

Տիկ. Նայիրի Բարախեանին. 514 891-4361

Եկեղեցւոյ քարտուղարութեան. 514 331-5445 x 202

Մուտքի նուէր՝ \$60.00

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔ

Հովանավորությամբ՝
Գերշ. Բաբգեն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայրոց Թեմին

Կազմակերպությամբ՝
Սուրբ Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցու, Մոնթրեալ
Եւ Սուրբ Գեորգ Եկեղեցու, Լաւալ

ՄԱՅԻՍ 7-18 2019



May 7: Depart from Montreal to Tel Aviv via Munich

May 8: Arrive at Tel Aviv, be greeted by our guide, drive to hotel

May 9: Tel Aviv / Ein Bokek, Dead Sea

- Visit Old Jaffa
- St. Nicholas Armenian Church and Convent
- Arrive at our hotel at the Dead Sea
- Swim in the dead sea, enjoy a mud bath ...

May 10: Ein Bokek, Dead Sea / Jerusalem

- Depart for Masada overlooking the Dead Sea (Cable car ride to the top)
- Visit Herod's many palaces
- Proceed to Ein Gedi, fabled spring of David
- Continue to Qumran, discovery site of Dead Sea scrolls
- Proceed to Jerusalem

May 11: Jerusalem

- Nativity Church
- Nativity Church - Armenian Monastery
- Shepherd's Field
- Israel Museum - Scale model of Jerusalem

May 12: Jerusalem

- Old City
- Church of St. Anne
- Pool of Bethesda
- Chapel of Flagellation
- Lithostrotos
- Arch of the Ecce Homo
- Arab Bazaar
- Church of the Holy Sepulchre, visit the Armenian Section
- Armenian Patriarchate of Jerusalem

May 13: Jerusalem

- Mount of Olives
- Church of Pater Noster
- Church of Ascension
- Russian Ascension Church
- Garden of Gethsemane, Church of all Nations
- The Tomb of Virgin Mary
- Armenian Seminary and St. James Cathedral (Sourp Hagop) at the Armenian Patriarchate of Jerusalem

May 14: Jerusalem

- Visit the Western Wall (Wailing Wall)
- View Mosque of Omar
- Visit the Jewish Quarter
- Walk along the Excavated Cardo
- Tour the Herodian Mansions

May 15: Jerusalem / Tiberias

- Leave Jerusalem for Tiberias
- Stop at ancient Jerico, visit the ruins of the city
- View Elisha's Fountain & the Mount of Temptation
- Travel to mount Tabor, Site of the Transfiguration of Jesus
- Continue to Nazareth to visit the Annunciation Church & St. Joseph's Workshop
- Drive to Tiberias

May 16: Tiberias

- Boat ride on the sea of Galilee
- Visit Capernaum
- Visit the Synagogue where Jesus taught
- Proceed to Tabgha, site of miracle of loaves
- Drive to Mount of Beatitudes, site of the Sermon on the Mount
- Drive to Caesaria Philip (Banias Springs)
- Visit Tel Dan, a Canaanite town
- Stop at Kursi, site where Jesus healed a man possessed by demons
- Proceed to the Jordan River for a baptismal service at Yardenit

May 17: Tiberias / Tel Aviv

- Drive to Cana of Galilee, where Jesus performed the first miracle
- Visit Mount Carmel and enjoy a magnificent view of Haifa
- End our visit at Caesarea, see the Roman theater and Herod's palace & aqueduct
- Drive to our hotel in Tel Aviv

May 18: Return flight to Montreal

\$4095.00 US



Յաղակալ տեղեկություններու եւ արձանագրութեան համար շուտով հեռաձայնել կամ գրել՝
Կարօ Նոյնտանեանին 514 331-5445 ext. 202 - garo.nokhoudian@sourphagop.net / Գրիգոր Տէր Ղազարեանին 514 918-6681 - krikordg@gmail.com
Հերմինէ Մանուկեանին 514 402-5137 - hermine.manoukian@gmail.com / Մարալ Պէքարեանին 416 858-2284 - maralbekarian@hotmail.com